

յստակ այլ պայմաններ չնախատեսէ, նաեւ ընդհանրականացման գաղափարը կը բովանդակէ. այսինքն՝ ան ի գօրու է՝ բոլոր բանական էակներուն (մարդոց) համար, ամենուրեք:

Կանտի *անպայմանական հրամայականը* ինքնին կանոն մը չէ, այլ՝ չափանիշ մը: Ով որ գիտնալ ուզէ, որ իր մտադրած կամ արդէն կատարած վարմունքը բարոյապէս *ճիշդ* է, պէտք է փորձէ այդ վարմունքը, որպէս ընդհանրականացած կանոն տեսնել եւ դատել՝ արդեօք կարելի՞ է այդ կանոնը, առանց հակասութեան կամ առարկութեան, որպէս *ընդհանուր կանոն* ընդու-նիլ եւ ընդունիլ տալ:

Այս գաղափարը կարելի է օրինակով մը աւելի յստակացնել: Կրնա՞յ գողը իր գողցած ապրանքը իր սեփականութիւնը նկատել, պարզապէս հետեւելով սեփականութեան օրէնքին: Անշուշտ ոչ, որովհետեւ «*ես կը գողնամ, սեփականութիւն ձեռք բերելու համար*» իմ անձնական գաղափար-կանոնը կամ մաքսիմը կարելի չէ որպէս *ընդհանուր կանոն* ընդունիլ՝ ինքնին հակասութեան մէջ ըլլալուն պատճառով: Այստեղ գողը սեփականութեան օրէնքը խախտած կ'ըլլայ, երբ ուրիշի մը սեփականութիւնը փորձէ իրը դարձնել:

Կանտի *անպայմանական հրամայականը*, պարզապէս անձնական կանոնի մը առանց հակասութեան ընդհանրականացումը չէ միայն, այլեւ պէտք է նկատի առնել՝ վարմունքին նպատակը, վարմունքը ինքնին եւ վարմունքը կատարող անհատը: Կանտի համաձայն, մարդոց գործնական բանականութիւնը, ի յառաջագունէ (*a priori*), բարոյականութիւնը կանխող հիմնական սկզբունք մը կը պարունակէ, որով բարոյականութիւնը ընդհանրապէս կարելի կը դառնայ: Այս հիմնական սկզբունքը, որ առկայ է բոլորին մօտ եւ ամենուրեք, կը սահմանէ *անպայմանական հրամայականը*, որ *պարտագիտական* բնոյթ կը կրէ: Ասոր կողքին, վարմունքի մը բերած օգուտէն եւ անոր հետեւանքներէն աւելի կ'արժեւորուի վարմունքի մը դիտաւորութիւնը. եթէ կամքը *բարի* է, այն ատեն վարմունքն ալ բարոյապէս *ճիշդ* է:

Կանտի *անպայմանական հրամայականը*, յաճախ կը շփոթուի *ոսկեայ կանոնին* հետ, որու բանաձեւն է, ինչպէս որ տեսանք (էջ՝ 167).-

«*Ինչ որ չես ուզեր որ քեզի ընեն, դու ալ (այդ) ուրիշներուն մի՛ ըներ*»:

*Ոսկեայ կանոնի* համաձայն, ուրիշներու հանդէպ պէտք է այնպէս վարուիս, ինչպէս կ'ուզես որ անոնք քեզի հանդէպ վարուին: Սակայն, Կանտի անպայմանական հրամայականի բանաձեւը եւ ոսկեայ կանոնի բանաձեւը, բոլորովին կը տարբերին իրարմէ: Ոսկեայ կանոնը *ենթադրական հրամայական* մըն է, քանի որ շատ յստակօրէն նպակադրում մը կը հետապնդէ. այդ նպատակը կը տեսնենք բանաձեւի առաջին բաժնին մէջ («*ինչ որ չես ուզեր որ քեզի ընեն*»): Կանտ, ինչպէս նշեցինք, իր երկերուն մէջ ուղղակիօրէն կը հակաճառէ ոսկեայ կանոնի գաղափարին, ուր կը պակսի անհատի պարտաւորութիւններու հիմքը՝ թէ՛ անհատը իր անձին հանդէպ եւ թէ անհատը ուրիշներու հանդէպ. (մինչ Կանտի տեսութիւնը, ինչպէս տեսանք, յատկապէս, հիմնուած է՝ պարտաւորութեան վրայ):